

— ՄԵ ՎԻՊԵՐ ԷԼ ՈՐ Առաջ գնան և ուժեղանան, յոյս կայ, որ գերմանական եսականութիւնը մի նոր ինկվիզիցիա կը ստեղծի յանուն աւետարանականութեան. գոնէ այս ընթացքը պարզապէս այդ է ասում իւրաքանչիւր բանիքուն ընթերցողին:

* * *

**Ի՞ՆՉՊԱՍ ՊԵՏՔ Է ՊԱՇՑՊԱՆԵԼ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ
ՄԵՐ ՕՐԵԲՐՈՒՄ. *)**

Դասական հնութեան ժամանակից մեզ հասած մի յայտնի անեկդոտ ասում է, մի անգամ մի աթենացի ճառախօս գալիս է Սպարտա և ապդարարում, թէ մի գոլատանական ճառ պիտի արտասանէ Հերակլէսի վրայ: Այն ժամանակ մի խոհուն և սակաւախօս լակոնացի նորան ուզում է հետեւալ շփոթեցուցիչ հարցը: «Միթէ որևէ մէկը նորան պարսուել է»: Յաւօք որտեղ սպասելի չէ, որ մէկն էլ գոռնայ ու իմ ընտրած խնդրի մասին մի նման տռարկութեամբ ինձ հարցնէ: «Խակայն միթէ մէկն ու մէկը յարձակումն է գործել քրիստոնէութեան վրայ»: Բայց հաւանական է, որ սմանք ասեն: «Այդ խնդրին ինձ չե՛ վեկարերում»: Ես ո՛չ պատկանում եմ այն մարդկանց շարքին, որոնց գէմ քրիստոնէութիւնը պէտք է պաշտպանել, զի ես նորան ի քունք սրտէ յարգում եմ, ոչ էլ նոցանից եմ, որոնց գործն է նորան պաշտպանելը, քանի որ ես աստուածաբան չեմ»:

Բայց և այնպէս իմ կարծիքով ամեն մի քրիստոնէի համար լաւ է, որ նա երբեմնակի կշռագատէ, թէ ինչ ձեռվ պէտք է պաշտպանել քրիստոնէութիւնը յատկապէս մեր օրերում:

Մենք զգում ենք, որ հէնց մեզանից ամեն մէկի մէջ մի բան կայ թագնուած, որի գէմ միշտ ևս նորէն առաջ պիտի մղել քրիստոնէութեան պաշտպանութիւնը, մենք զգում ենք՝ լինում է սոսէ, երբ մենք թէպէտ և սրտով քրիստոնէայ, մըտքով հեթանոս ենք, այո՛, երբեմն էլ նոյն իսկ սրտով լաւ քրիստոնեայ չենք:

Խակայն մենք գիտակից ենք նաև, որ քրիստոնէութեան պաշտպանութիւնը պէտք չէ թողնել մի միայն հոգևորականնե-

*) Քաղուածօրհն իրազմանուած D. Paul Mehlhorn, Wie ist in unserer Zeit das Christentum zu verteidigen? 2 Aufl. Berlin, 1894, գրքոյից:

ըին և աստուածաբաններին, այլ որ մենք ևս պարտք ունինք իւրախանն նպաստելու իւր յարատեսթեան դործին, որով և մի տեսակ՝ զինուուոր լինելու ընդհանութ պարտականութիւն՝ կատարելու:

Ամենից առաջ մենք ընականաբար պիտի տանք հետեւեալ հարցը. «Ի՞նչ պէտք է լինի խոկապէս մեր պաշտպանութեան նիւթը»: Հարկաւ քրիստոնէութիւնը. սակայն այս մի խիստ ընդարձակ ըմբռնումն է, որ և կարող է շատ մեկնութիւններ վերցնել: Քրիստոնէութիւնն ունեցել է զարգացման շատ և շատ աստիճաններ. նա այսօր լնկագրկում է մի շարք եկեղեցիներ կամ դաւանանքներ, իսկ սոցանից ամեն մէկն ունի բազմաթիւ տրամադրութիւններ, ձգաւմներ և մտապատկերներ, որոնք երեան են դալիս և արտայայտում սովորութիւնների, կարգերի ու վարդապետութիւնների մէջ: Ի՞նչը պէտք է մենք պաշտպանենք այս բոլորից:

Մեր ժամանակի մի անկորուսանելի յաղթանակ է, որ մենք ամեն մի լոկ զբակց եկող հեղինակութեան դէմ մեղ վերտապահում ենք մեր՝ քարեխզնօքէն կշռագատած փորձառութեան ծնունդ՝ սեպհական կաթոքիքը: Նուե այն մաքերը, որոնք առանց գլուխական ջանքերի մի տեսակ նուաճող զօրութեամբ և հաւաստիութեամբ յանկարծակի ծնունդ են առնում մաքերցին մի հսդու մէջ և որոնց մենք կը օնի նկատմամբ յայտնութիւնն անունն ենք տակիս, այլոց համար տիրող ճշմարտութիւններ են դառնում լոկ այն ժամանակ, երթ որ նոցա ներքին աշխարհում արգէն հաստատութիւն են զակել ու նոցա վորձառութիւնների շարքն անցել:

Քանի որ այսօր աստուածաբանական գիտութիւնների նոյն խիլ պահպանողական ներկայաբուցիչները ձեռք են վերցրել ու Գրքի տառացի կերպով աստուածաշունչ լինելու ուսումնից, *) անխորհարդարան է պաշտպանութեան նիւթ դարձնել այն ամենն, ինչ որ սովորաբար հասկացնում է քրիստոնէութիւն ըառի ներքոյ, այլ պէտք է պաշտպանել մի՛միայն քրիստոնէութեան ուղին ու ծուծը, իւր էութիւնն ու հիմնական ճշմարտութիւնները: Սոքա են. Աստուած սէր է. Ցիսուո Քրիստոնի ձեռքով մարդկութիւնը կոչուած է յորդեղրութիւն երկնաւոր Հօր. մար-

*) Հեղինակն ի նկատի ունի գիտակոն հիմունիներով առաջ լմրացող ել «բողոքական—աւետարանական» անունը կրող աստուածաբանութիւնը:

գիել կազմում են մի ընտանիք—արքայութիւնը Աստղէծոյ—և պարտք ունին եղացրական սիրոյ:

Իսկ ում դէմ պէտք է պաշտպանել քրիստոնէութիւնը մեր օրերում:

Նախ այս պաշտպանութիւնը պէտք չէ ռւղղել քրիստոնէական այլ և այլ դաւանանքների դէմ, զի ընդհանուր թշրիւամու առաջ ու շադրութեան պիտի չառնել այն մասը տարբերութիւնները, որոնք պատճառ են այլ և այլ աստուածաբանական և եկեղեցական ռւղղութիւնների, այն ինչ քրիստոնէական հիմնական ճշմարտութիւններն ընդհանուր են ամենքին էլ:

Երկրորդ՝ նոյնպէս անտեղի կը լինէր կուիւ մզել գիտութեան ձեռք բերած անհերքելի ճշմարտութիւնների դէմ: Կրօնը հոգու և որտի գործ է, նա զբաղւում է աշխարհի յաւիտենական պատճառով և նպատակով և իւր լինել-լինելը կախումն չունի երկութական աշխարհի նկարագրութիւնից ու բացութրութիւնից: Աստուած ուրի է, Աստուած Քրիստոսի մէջն էր և Աստուած կամննում է սիրելի անձնաւորութիւնների թագաւորութեան մէջ լինել ամենայն յամենայնի. և քրիստոնէի համար միանգամայն նոյն բանն է, արդեօք ըստ հին հայեացքի արեգակն է երկրի շուրջը պտտում, թէ ըստ նորի՝ երկիրն արեգակի, արդեօք մեր աշխարհը վեց օրում՝ թէ ժամանակի անվերջ շրջաններում է յաւաջ եկել, արդեօք Աստուած մի՛միայն երբեմն է ձեռնամուխ լինում աշխարհի անիւնին, թէ յաւիտենական կարգելի մշտական կատարման մէջ է իւր գործը: Մի՛միայն այն գէպքում, երբ ո՛չ «գիտութիւնն», այլ մի անկոչ ներկայացուցիչ որ և է գիտութեան ժխտում ու հակառակումէ այն բանին, որ մեզ որտի ամենամեծ բոլանգակութիւնն ու նորա թռիչքի ոյժն է, ժամ է կուիւ մզելու, սակայն յարձաւ կումն գործողի գէմ և ո՛չ այն «գիտութեան», որի գրօշակը նա անկոչ կերպով կը ում է:

Երրորդ՝ նոյն կերպ պիտի վերաբերի քրիստոնէութիւնը նաև ամեն մի դուռ քաղաքական կամ անտեսական հայեցակտի, եթէ ոռքա չեն ելնում իրենց սահմաններից: Իսկ եթէ քաղաքական և ընկերավարական կուսակցութիւնների բանավարներն (Worfführer) սկսում են այլ և այլ ձեւերով քրիստոնէութիւնը ծաղրի առարկայ գարձնել, եթէ նոքա կեսնքի ոչ մի առելի վեհ նպատակ չեն ընդունում քան զգայական վայելքը կամ մտքի լուսաւորութիւնը և իրենց նպատակներին համելու համար կանգ չեն առնում՝ ո՛չ մի անիրաւութեան և ըռնութեան առաջ, ապա հարկաւ պիտ հնչէ յարձակման

կոչք՝ պաշտպանել քրիստոնէութիւնն այսպիսի ուղղութիւնների անսատուած և անպատկառ ներկայացուցիչների գէմ:

Աստ այսմ քրիստոնէութեան հակառակօրդների առաջին և աչքի զարնող խումբն են «զմարմնոյն խորհողները» (Հռովմ. Է. 50.) կամ իրօք անաստուածներն ու մատերիալիստները:

Երկրորդ կարդի հակառակօրդներն են տեսականապէս ո՛չ քրիստոնեայ անձինք, մարդիկ, որոնք կրօնական համազմունքները կամ ուղղակի ժխտում են և կամ միանդամայն անվըստահելի—անկայուն յայտարարում։ սոքա իրապէս գեռ ևս մասամբ քրիստոնեայ են, քանի որ շարունակում են պահել իրենց հայրերից ժառանգած անդիտակցական քրիստոնէութեան գէթ մի մասը։ սակայն վտանգը մեծ է, թէ սոքա ևս կարող են հետզհետէ հրաժեշտ տալ քրիստոնէական կրօնին։

Վերջապէս քրիստոնէութեան բարդաւաճման ու յարատեութեան հակառակորդ պիտի համարել նաև այն մարդկանց, որոնք քրիստոնեայ լինելով հանդերձ, եկեղեցուց գուրս են մնում։ սոքա են ո՛չ պատմականօրէն մտածող անձինք, որոնք չեն ըմբռնում եկեղեցու նշանակութիւնը, որպէս պատմութեան ընթացքում քրիստոնէական իդէալը պահպանող և իրագործող հիմնարկութեան։

Ինչպէս որ տարբեր տեսակի են քրիստոնէութեան հակառակորդներն, այդպէս էլ տարբեր պիտի լինի քրիստոնէութեան պաշտպանութեան ձևը—հարկաւ միշտ ևս լոկ արդար, հոգեոր և սիրոյ միջոցներով։ Քրիստոնէութիւնը պէտք է պաշտպանել ո՛չ միայն խօսքով, այլ և անձնական կենդանի վկայութեամբ, բարի օրինակով և սիրոյ գործով։ ԱՄԵՆՔ այստեղ խօսում ենք միմիայն քրիստոնէութիւնը խօսքով պաշտպանելու մասին։

Ամենից տռած պէտք է բարեխզնօրէն քննել հակառակորդի ասածն ու համարձակ ընդունել, ինչ որ նորա ասածների մէջ իրաւացիք է։ Այս կանոնին մենք պէտք է աւելացնենք նաև այլ երկու հիմնական կանոններ։ Դամ՝ խնամքով կշռադատի՛ր քո մէջ բերած հեմքերի զօրութիւնն ու խուսափի՛ր ամեն մի չափաղանցութիւնից, որ հակառակորդիդ վստահութիւնն խօսպատարել կարող է։ և երկրորդ՝ բացարձի՛ր, թէ ինչպէս են յառաջ եկել քրիստոնէական աւանդութեան այն ուսմունքներն ու պատմուածքները, որոնք թէպէտ և արդի մտածողութեան հակասութիւններով լի և անկարելի են թուում, բայց և այնպէս խորազնին աչքի համար երբեք անհիմն ցնորաբանութիւններ չեն։ Թուի՛ր այն փորձառութիւնները, իրականութիւններն

ու հոգու տպաւորութիւնները, որոնց ծնունդ և արտայայտութիւն են վերոյիշեալ ուստանքներն ու պատմուածքները։ Ժամանակակից կենդանի մարդու մէջ կայ երկու միանգամայն երաւացի պահանջ, որոնց պէտք է բաւարարութիւն տալ։ մի ջերմ ցանկութիւն որոշելու մնայունը կրօնական ճշմարտութեան, աշխարհին յաղթող, երջանկացնող ու որբացնող իդէալների մէջ և իրեն հասունացած զգացող բանականութեան պահանջը՝ ոչ մի անմարուելի բան կուրօքէն կուլ չտալու։ Նորաայդ պահանջներին մենք բաւարարութիւն տալ կարող ենք միմիայն այն գէպքում, եթք ընդունենք, որ զարդացման գաղափարը վերաբերում է նաև քրիստոնէութեան մտապատկերների աշխարհին։ Միմիայն այսպէս կարող ենք մենք այսօք միաժամանակ պահպանել և՛ բարեպաշտութիւնը, և՛ աղատութիւնը, և՛ բարեպաշտութեան, և՛ գիտութեան իրաւունքները։ Մենք կանգ պիտի շառնենք ոչ բանուածք և ոչ գրաւոր աւանդութիւնների վրայ, որոնք այնուամենայնիւ բաղմազան կանկածների տեղ են թողնում, այլ մարդկային հոգու խորքում տեղի ունեցող այն փորձառութիւնների, որոնք մատչելի են ամենքին և որոնց անհամեմատ աւելի մեծ արժէքը պարզ է ամեն մի մարդու, եթէ նա դիտմամբ աչքերը չի խփում՝ այդ շտեսնելու։

Աշխատենք հնարաւութեան չափ կարճ կերպով յեշատակել այն փորձառութիւնները, որոնք անհամեշտ են քրիստոնէական համոզմունքի իրաւունքը հաստատելու համար։

Ամենից առաջ մեր դէմն է ելնում ընդհանրապէս կրօնասածիդ երդուեալ թշնամին՝ մատերիալիզմը (ոչ յաջող թարգմանութեամբ—նիւթապաշտութիւնը) և առում։ «Ո՞յ թէ ինչ, ուրեմն դուք փորձառութեան մասին էք այդպէս զառանցում ու գատարկաբանում։ Զէ՞ որ հէսց դուք շնորհեւ էլ ի չեք է դառնում կրօն ասածդ, քանի որ նա փորձառութեան հակառառում է։ Փորձառութիւնը մեզ ոչ մի տեղ ցոյց չի տալիս ոչ Աստուծուն և ոչ էլ հոգի։ Նոյն իսկ այն, ինչ որ մենք մարդկային հոգի ենք անուանում, լոկ ծնունդ է նիւթի որոշ մասնիկների շարժման։ Ի ոկզբան էք ո՛չ չոգին, այլ նիւթն»։

Նիւթ—ըստ երեսութիւն այս մի վերին աստիճանի պարզը ըմբռնումն է։ և սակայն այս կարծեքը յատուկ է լոկ վայր և վերոյ մտածող և կամ մտածելու կարողութիւնից զուրկ անձանց։ Խսկապէս ի՞նչ բան է նիւթը։ Այն, ինչ որ ըստ տարածութեան ընդարձակում է և տարածութիւնը լցնում։ Բայց արդեօք ինչո՞լ է լի տարածութիւնը։ Թէ ինչն է տարա-

ծութիւնը լցնում, մենք մարդիկս գիտենք մի՛միայն այն չափով, որ չափով որ մենք ծանօթութիւն ենք ստանում նորա մասին՝ իւր մեղ վրայ ունեցած աղդեցութիւնից, այլ և մեր փորձառութիւնից, թէ ի՞նչ ոյժ ունի նա:

Ասել է թէ նիւթը չէ ենթակայ մեր անմիջական փորձառութեան, այլ մենք նորան համարում-մտածում-ընդունում ենք մի՛միայն իրրե պատճառ այլ և այլ ոյժերի: Չնենք փոքր ինչ մեր փորձառութեան հիմք կազմող ոյժերը և կը տեսնենք, որ տարբեր բաներ են արտաքին շարժողութեան և ներքին զգացման ոյժերը: Մեր թմրկաթաղանթը շարժուող օդի ազդեցութեան ներքոյ ենթարկւում է մի շարք տատանումների և մենք զգում ենք երեխն մի բարեհնչչւն մեղեղի, իսկ երեխն մի շիմթ ու աներդուաշնակ ազմուկ: Միթէ պարզ կերպով մեր առաջն է զրուած այն պատճառը, որից յառաջ են գալիս վերոյացեալ հակագիր տպաւորութիւնները, միթէ մենք տեսնում կամ զգում ենք օդի տատանումների թիւն ու ժամանակի միջոցները: Կ՞ոչպէս է լինում, որ նոյն միջոցին, երբ մի ալիք անմերջ կերպով հրում է միւսին, ալիքների այս խաղի հետ միանժամանակ մենք մտքի տունն ենք ընկնում ու մեր սիրտը լցւում է զգացումներով.—արդեօք ըմբռնելի՞ է այս մեզ: Ո՞չ, եթէ կամ մենում ենք լու մտածել ու ակնութեամբ խօսել, ապա կարող ենք ասել մի՛միայն հետեւեալը մենք գիտենք, որ արտաքին աշխարհում աարածութեան մէջ տեղի ունեցող շարժումները և ներքին աշխարհի անտարած զգացումները յիրաւի յարաբերութիւն և կապ ունին միմեանց հետ, բայց մենք երբէք չենք կարող ասել, թէ ահա այս որոշ հոգեկան զգացումը հետեւանք է նիւթի այս ինչ շարժման: Դիւըուա Ռայմոնդ ընագէտն ասում է. «Քուրովին անըմբռնելի կը լինէր ասել, թէ ածխածնի, ջրածնի և թթուածնի հիւլէների համար միանդամայն նոյն բանը չէ, իսենք որտեղ են և կամ ինչպէս են շարժում»:

Ո՞րն է նախնական և հաստատուն, այն՝ որ մենք մի բան ենք զգում թէ այն՝ որ մենք կամ մեր շրջապատը շարժոււթեան մէջ ենք: Երբ մենք շոգեկառքումնոտած ենք ու հարեւան գծի վրայ մի այլ գնացք շարժում է, մենք կարող ենք սխալուել ու կարծել, թէ շարժուողը մեր գնացքն է. նոյնպէս մենք կարող ենք սխալուել ու շիմանալ, թէ ի՞նչ փոփոխութիւն է տեղի ունենում մեր մարմնի մէջ, որ իրապէս պատճառ է մեր նոյն միջոցին զգացածի. բայց որ մենք այս ինչ զգացումն ունինք այս մեղ համար մի այնպիսի անժխտելի իրականութիւն է աշ-

Խարհում, որ ո՛չ ոք և ո՛չ մի քան մեզ չե՛ կարող համոզել, թէ մենք այդ չե՞նք զգում; Շապիկը մարմնին աւելի մօտ է քան ըածկոնն ու վերարկուն, այդպէս և մեր ինքնազդացումն ու ինքնազդացութիւնը՝ ապա ուրեմն մեր ներքին հոգեկան փորձառութիւնը՝ մեզ համար շատ աւելի հաւասար ու աներկ-քայելի են քան թէ ամբողջ արտաքին աշխարհը և մենք երեւ չե՞նք կարող թրապէս ըմբռնել ու ասել, թէ ներքին փորձառու-թիւնը հետեւանք և արդիւնք է արտաքին աշխարհի: Աթէ կա-մենանք միակողմանի լինել և այդ երկու բաներից մէկն ու մէկը ժխտել, ապա մեր իմացողութեան օրէնքների դէմ աւելի քիչ կը մեղանչենք նիւթական աշխարհի քան թէ հոգու գոյու-թիւնն ուրանարով. բանականութեան շնտ աւելի մատիկ է ասել, որ այն աշխարհը, որի մէջ մենք ապրում ենք, է գործ և և յայտնութիւն յաւիտենական հոգու, քան թէ ընկունել, թէ այն աշխարհը, որ մեր ներս է ապրում, լոկ մի աղդեցութիւն կամ օդապատկեր է հոգեզուրկ նիւթի:

Երօք Լոցի՝ աղնիւ փիլիսոփուն մեխի ուղիղ գլխին է խփում առելով. «Մարդկացին մաքի ըոլոր մոլորութիւններից ինձ հա-մար միշտ էլ ամենից աւելի տորօքինակն այն է, որ մարդու ոկտել է կառկածել իւր իսկ սեպհական էութեան մասին ու նորան համարել ծնունդ արտաքին ընութեան, ընութեան, որ մեզ մատչելի է լոկ այն իսկ հոգու միջոցով, որի գոյու-թիւնը սոյն բացարութեան հետ էլ արդէն իսկ ուրացւում է»:

Այսպէս ուրեմն քրիստոնէութիւնը ընաւ առիթ չունի իրեն մատերիալիզմի առաջ յաղթուած յայտարարելու. «Եւ հոգին է որ վկայէ, զի հոգին իսկ է ճշմարտութիւն» (Ո. Յովհ. Ե. 6). Կրօն առածիդ, լինի դա զարդացման ոտորին թէ վերին առտեճանի վրայ, արմատը մարդու հոգեսր էութեան և իւր անմիջական ինքնազդացման մէջ է: Կարելի է իրաւամբ ասել. ամեն մի մարդ, որ իւր կետնքը փոքր իշատէ գնահատում է, և վերջոյ կամ պիտի յաւսահատուի և կամ հաւատայ: Նո զգում է, որքան էլ մութ լինի այդ և շփոթ, որ ամբողջ աշ-խարհը որ և է խորհուրդ ունի միմիայն մտածող հոգու և որ և է արժէք լոկ զգացող սրտի համար:

Այս զիտակցութիւնն ապրում է նորա մէջ և ահա նա աշխատում է աէր լինել «անզզայ ընութեան» մէջ: Սակայն մըքան յաճախ է ընութիւնը նորա դէմ ելնում ու նորա ծրա-դիւներն անողոք կերպով խանգարում: Ոքան յաճախ է աշ-խարհին տիրելու կոչումն ունեցող մարդու ինքն իրեն այդ իսկ աշխարհի առաջ օտար, լքեալ ու անօգնական զգում: Անձնա-

տուր լինել այս լքեալ-անօգնական վիճակին նշանակում է յուսահատուել, մարդկային արժանեաց վառ գիտակցութիւնը մի դատարկ ու հակասութիւններով լի երազ համարել և այդպիսով էլ երես դարձնել նորանից։ Եւ սակայն կենդանի մարդը երբէք չի յուսահատում լիովին, զի այդ հաւասար կը լինէր մահուան։ Կեանքի հակասութիւնների համար նա լուծումն է որոնում։ Քանի ծանր է կուիր՝ այնքան էլ ոյժերի լարումը, որքան մութն է ճանապարհ՝ այնքան էլ մեծ է ճիգը դէֆփոքը ինչ տեսնելու։ Եւ տես՝ ահա լոյսը բացւում է. ահա սկսում է փայլել մի աստղ այստեղ և մինն այնտեղ, ահա հետզհետէ մի մեծ լոյս է ծագում և ամբողջ հորիզոնի վրայ ափուում։ Վերջապէս ելնում է և արեգակը, նոեմացնում նաև կիսալուսնի անզօր փայլը և ահա աշխարհին տիրում է օրուայ պայծառ և ջերմ լոյսը։

Խօսե՞նք առանց պատկերի։ մարդիկ խայտաբղէտ արտաքին աշխարհից այն կողմն ու վեր զգում և որոնում են հոգեսոր ոյժեր, որոնց իրենք էակից են և որոնց հետ հազորդակցութիւն ունենալ կարող են։ Նոքա երբեմն այդ հոգեսոր ոյժերը սխալմամբ այլ տեղ են որոնում, նոքա յաճախ շատ միամիտ ու մանկական հայեացք են ունենում այդ ոյժերի մասին։ յաճախ միամիտ է նաև իրենց կարծիքը, թէ ի՞նչ կերպ կարելի է օգնութիւն ստանալ այդ ոյժերից։ Սակայն քաղաքակրթութեան պատմութեան մէջ և վերջոյ յաղթահարւում է այն ամենն, ինչ որ հաստատուն ու մնայուն չէ, և հարթուում այն ուղին, որ մարդկանց առաջնորդում է գէոլի այն վեհ գաղափարը, թէ «Հոգի է Աստուած, և երկրագուաց նորահոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկեր պատանել, (Յովհ. Դ. 24) և թէ «Մի Աստուած, և Հայր ամենեցուն՝ որ և վերայ ամենայնի, և ըսդ ամենեսին՝ և յամենեսին ի մեզ» (Եփես. Դ. 6)։

Ներակա արեւայ Տէր-Միմայէլեան.

